Արձանագրություն

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 25-ի թիվ 8 նիստի։

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու յոթ անդամներից հինգը՝ Մարզպետունի Ալեքսիսյանը, Արյաշի Հովհաննյանը, Մամիկոն Նազարյանը, Շմավոն Կարապետյանը, բացակայում էին Ռուստամ Ներսիսյանը, Նորայր Միրականյանը և Արմեն Միրականյանը /առանց հարգելի պատճառի/։

Նիստը վարեց համայնքի ղեկավար Ռ. Միրականյանը։

Արձանագրեց Գ.Ղազարյանը։

Օրակարգ՝

Հարց-1. Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 23-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին։

Զեկուցող՝ Ռ. Միրականյան

Հարց-2. Վարդաձոր համայնքի 2018թ. տարեկան բյուջեի նախագիծը քննարկելու և հաստատելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 26-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին մասին։

Վարդաձոր համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել նիստի օրակարգը՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0։

1.Մարզպետունի Ալեքսիսյան

2. Շմավոն Կարապետյան

3.Արյաշի Հովհաննյան

4.Մամիկոն Նազարյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Միրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29-Ն

25-ը Դեկտեմբերի 2017թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

## Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 23-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ և 20-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե ենթակետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետով.

### Համայնքի ավագանին որոշում է՝

1/ Խմելու ջրի ներտնտեսական ցանցի ընթացիկ նորոգումների և սպասարկման համար յուրաքանչյուր տնից կամ շինությունից տարեկան դրույքաչափը սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:
2/ Գյուղապետարանին պատկանող տրակտորով հողի վարի վարձավճար 1հա հողատարածքի հաշվով35000 /երեսունհինգ հազար/ դրամ:
3/ Գյուղապետարանին պատկանող հացահատիկային կոմբայնով բերքահավաքի աշխատանքների համար 1հա-ի հաշվով 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:
4/Աղբահանության համար սահմանել
ա/ Համայնքի բնակչությունից գանձել աղբահանության վճար մեկ անձի համար ամսական 50 /հիսուն/ դրամ,
բ/ Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ - 1քմ համար 50 դրամ,
գ/ Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ - 1քմ համար 20 դրամ,
դ/ Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ - 1քմ համար 5 դրամ,
ե/ Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ
- 1քմ համար 3 դրամ:
5/ Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել լիազոր մարմնին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման համար:
6/ Ուժը կորցրած ճանաչել Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 23-Ն որոշումը:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարգվետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհանյան

4.Մամիկոն Նազարյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Միրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 28-Ն

25-ը դեկտեմբերի 2017թ. | գ. Վարդաձոր

**Վարդաձոր համայնքի 2018թ. տարեկան բյուջեի նախագիծը քննարկելու և հաստատելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 26-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին մասին**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31 և 32-րդ հոդվածի 5-րդ մասով.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի 2018թ. բյուջեի նախագիծը 68187.0 հազար դրամ /վաթսունութ միլիոն հարյուր ութսունյոթ հազար դրամ/
ա/ եկամտային մասը ըստ թիվ 1 հավելվածի,
բ/ ծախսային մասը ըստ թիվ 2 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 26-Ն որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց`

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարգվետուհի Ավետիսյան
2. Շմավոն Կարապետյան
3.Արասի Հովհանյան
4.Մամիկոն Նազարյան
5.Քրիստինե Ներսիսյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Միրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան